

ԿԱՐԳ

«ՎԵՈՒԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ ՎՃԱՐՎԱԾ ՏՈՒԺԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378Ն որոշմամբ սահմանված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների պահանջները խախտելու համար բաժանորդներին վճարված տուժանքների վերաբերյալ տեղեկատվության (այսուհետ՝ տեղեկատվություն) հանձնաժողով ներկայացման ընթացակարգը:
2. Տեղեկատվությունը ներկայացվում է՝
 - 1) եռամսյակային կտրվածքով՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա ավարտը՝ համաձայն հավելվածի.
 - 2) էլեկտրոնային եղանակով՝ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի էլեկտրոնային ստորագրությամբ՝ tech.report@psrc.am էլեկտրոնային հասցեին և (կամ) ներբեռնվում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնական կայքի (psrc.am) առցանց դիմումների և հաշվետվությունների հանձնում բաժնում (<https://e-services.psrc.am/>).
 - 3) Էքսելիէս (XLS) կամ ԷքսելիէսԷքս (XLSX) կամ ՕԴԻԷս (ODS) ֆորմատների ֆայլերի տեսքով, հայկական ֆոնետիկ յունիկոդ (phonetic unicode) տառատեսակով:
3. Տեղեկատվության ներկայացման վերաբերյալ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա ավարտը գրավոր ծանուցում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից բաժանորդներին վճարված տուժանքների վերաբերյալ

___ եռամսյակ 20 __ թվական

№	«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի տեղամասը	Բնակավայրը	Բաժանորդի			Խախտման դեպքը	Խախտման ամսաթիվը	Վճարված տուժանքը (ՀՀ դրամ)	Նշումներ
			անուն ազգանունը (կազմակերպության դեպքում՝ անվանումը)	քարտի համարը	հասցեն (կազմակերպության դեպքում՝ գործունեության վայրը)				
1	2	3	4	5	6	7	8	9	10
1									
2									
3									
4									
5									

1. Աղյուսակի 7-րդ սյունակում նշվում է հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378Ն որոշմամբ սահմանված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների այն կետը (ենթակետը), որի պահանջի խախտման համար բաժանորդին վճարվել է տուժանք: